



ԳԻՐ-ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՐԻՈՅ ՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ,

Ի Ա. ՊԱՏԳԱՄԱՌՈՐԱԿԱՆ ԺԱՂՈՎԷՆ



ԾՐԱԳԻՐ-ԿԱՆՈՆԱԳԻՐ

Հ. Յ. Դ.

ՍԻՐԻՈՅ ՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

ԱՆՈՒՆ

1. — Միութիւնս կը կոչուի «Հ. Յ. Դ. Սիւրիոյ Պատանեկան Միութիւն» :

ՆՊԱՏԱԿ

2. — Միութեանս նպատակն է մղում տալ Ալւրիոյ հայ պատանիներու բարոյական, ֆիզիքական ու մտաւոր ինքնազարգացման և անջատելի ու քաղաքական դաստիարակութեան :

ՄԻՋՈՑՆԵՐ

3. — Միութիւնս իր նպատակին հասնելու համար՝

ա). — Կը կազմակերպէ առանձին գրադարան :

բ). — Կը հրատարակէ իր նպատակին համապատասխան պաշտօնաթերթ և գրքոյկներ :

գ). — Կը սարքէ դասասփռութիւններ, գեղարուեստական երեկոյթներ, վիճարանական ժողովներ, ինչպէս նաև մարմնակրթանքի, խաղեր ու մարզանքներ :

ՀԱՍՈՑԹՆԵՐ

4. — Միութեանս հասոյթներ կը կազմեն անսղամալճարներէ, կամաւոր նուիրատուութիւններէ,



միայուն քարտուղարը և իւրաքանչիւր ժողովի համար նախագահը :

Ծանօթ. — Անդամներու մէկ երրորդի գրաւոր պահանջին համաձայն, վարչութիւնը պարտաւոր է լինդ. ժողովի հրաւիրել :

19. — Եթէ առաջին և երկրորդ ժողովներուն մեծամասնութիւնն չզոյանայ, երրորդ ժողովը՝ եղած ներկաներով՝ օրինաւոր կը նկատուի :

20. — Լինդ. ժողովը կրնայ ի պահանջել հարկին դատական և քննիչ յանձնախումբեր ընտրել :

Տեղւոյն ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

21. — Սիու թեանս տեղական գործերը կը վարէ Տեղ. Վարչութիւնը. որը կը բաղկանայ 5—7 անդամներէ և կ'ընտրուի 6 ամսուայ համար :

22. — Տեղ. Վարչութիւնը կ'ընտրուի լինդ. ժողովի ուղղակի և զաղտնի քուէարկութեամբ, մեծամասնութեան քուէով :

23. — Ներկաներու կէսէն մէկ աւելի քուէ չահողը Վարչութեան անդամ կ'ընտրուի :

Ծանօթ. — Տեղ. Վարչութեան ունէ մէկ անդամի հրաժարումի և կամ քաղաքէն մեկնումի պարագագային, լինդ. ժողովը անոր տեղը նոր մը կ'ընտրէ :

24. — Տեղ. Վարչութիւնը կ'ունենայ իր միայուն դիւանը, բաղկացած մէկ նախագահէ, մէկ քարտուղարէ, մէկ գանձապահէ և զոչքապահէ մը :

25. — Տեղ. Վարչութիւնը չարաթր անդամ մը ժողով կը զուգարէ և կ'զրադի միութեան ընթացիկ

գործերով :

26. — Տեղ. Վարչութիւնը երեք ամիսը անգամ մը տեղեկատուութիւն կ'ընէ Ընդ. Ժողովին և վաւերացնել կուտայ իր նիւթական հաշուեկշիռը :

27. — Տեղ. Վարչութիւնը լուծուած կը համարուի երբ իր մեծամասնութիւնը կը կորսնցնէ :

Ծանօթ. — Տեղ. Վարչութեան անդամները վերը ընտրելի են յաջորդ շրջանի համար :

ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

28. — Կեդր. Վարչութիւնը կ'ընտրուի Հ. Յ. Դ. Սիւրբոյ Պատ. Միութեան Պատգ. Ժողովէն, մէկ տարւայ համար և կը բաղկանայ 5-7 անդամներէ :

29. — Կեդր. Վարչութիւնը կ'ունենայ իր դիւանը. կազմուած մէկ նախագահէ, մէկ քարտուղարէ և զանազանէ մը :

30. — Կեդր. Վարչութիւնը կ'ըրադի Միութեան թերթով, կը վարէ յարաբերական գործերը Տեղ. Վարչութիւններու հետ և կապ կը պահէ Կ. Կ. ի հետ, սյս վերջինի ներկայացուցիչի միջոցաւ :

31. — Կեդր. Վարչութիւնը համարատու է բարոյապէս և նիւթապէս Պատգ. Ժողովի և Կ. Կ. ի առջև :

Ծանօթ. — ա. — Կեդր. Վարչութեան անդամներէն ունէ մէկը չի կրնար Տեղ. Վարչութեան անդամ ընտրուիլ :

բ. — Կեդր. Վարչութեան անդամները վերը ընտրելի են յաջորդ շրջանի համար :

32. — Կեդր. Վարչութեան գործերուն կը հսկէ Կ. Կ. ի ներկայացուցիչը :

ՊԱՏԴ. ԺՈՂՈՎ

33. — Պատգ. Ժողովը Հ. Յ. Դ. Սիւրբոյ Պատ. Միութեան գերազոյն մարմինն է, որ կը գումարուի տարին անգամ մը Կեդր. Վարչութեան հրաւերով :

Ծանօթ. — Կեդր. Վարչութեան անհրաժեշտ դատած պարագայէն կրնայ բաղադրուիլ Պատգ. Ժողովը հրաւիրել Կ. Կ. ի հաւանութեամբ :

34. — Պատգ. Ժողովը կը քննէ Կեդր. Վարչութեան մէկ տարւայ բարոյական և նիւթական հաշիւները և կը գծէ յաջորդ տարւայ գործունէութեան ծրագիրը :

35. — Պատգ. Ժողովին կը մտանակցին վաւրի մը անդամները հետեւեալ համեմատութեամբ՝ իւրաքանչիւր 25 հոգիի կողմէ մէկ ներկայացուցիչ, 40-50 հոգիի երկու ներկայացուցիչ, 60-75 երեք ներկայացուցիչ, իսկ 90-100-ի՝ չորս ներկայացուցիչ :

Ծանօթ. — Փոքր շրջանները, վերոյիշեալ օրինաւոր թիւը չեն յրացներ, իրարու միանալով, կրնան ներկայացուցիչ զրկել :

36. — Վճռական ձայնով կը մահնակցին Կեդ. Վարչութեան կողմէ մէկ ներկայացուցիչ կուսակցութեան օրկանի կողմէ՝ մէկ ներկայացուցիչ, և Միութեան օրկանի կողմէ մէկ ներկայացուցիչ, Պատգ. Ժողովի հրաւիրած վայրի Տեղ. Կօմիտէի կողմէ մէկ ներկայացուցիչ, Կ. Կ. ի կողմէ՝ մէկ ներկայացուցիչ :

Ծանօթ. — Պատգ. Ժողովը վճռական և կամ խորհրդակց. ձայնով Ժողովի կրնայ հրաւիրել իր յարմար տեսած ընկերները, այն պայմանով որ հրաւիրածներու թիւը իր կազմին մէկ երրորդը չանցնի :

37. — Պատգ. Ժողովի ներկայացուցիչներէն իւրաքանչիւրը կրնայ ունենալ մէկ ձայն :

38. — Պատգ. Ժողովի ներկայացուցիչները պարտաւոր են իրենց վայրի մէկ տարուայ գործունէութեան բարոյական և նիւթական տեղեկութիւնները՝ վաւերացուած Ընդ. Ժողովի գլխանէն, բերել Պատգ. Ժողովին :

39.— Պատգ. Ժողովի բոլոր որոշումները կ'ենթարկուին Կ. Կ. ի վաւերացման :

Վ Ա Ր Ի 2

40.— Իւրաքանչիւր վայր կ'ունենայ իր առանձին լարիչը, որը կ'ընտրուի Տեղ. Կօմիտէի կողմէ :

41.— Վարիչի պաշտօնն է ուղղութիւն տալ Տեղ. Վարչութեան գործերուն, հակել Ծրագիր-Կանոնագրի գործադրմանը, կապ պահել վարչութեան և Տեղ. Կօմիտէի միջև :

42.— Վարիչը բարոյապէս պատասխանատու է Տեղ. Կօմիտէի առջև վարչութեան բոլոր գործերուն. համար :

43.— Վարիչը կը մասնակցի Տեղ. Վարչութեան ժողովներուն, կը հաստատէ կամ կը մերժէ այն բոլոր որոշումները, որոնք համապատասխան չեն կուտակչութեան չահերուն :

Ծանօթ.— Հրապարակային յայտարարութիւններ դասախօսութիւններ, ներկայացումներ կ'ըլլան վարիչի հաւանութեամբ և Տեղ. Կօմիտէի գիտութեամբ :

44.— Տեղ. Վարչութեան հակակուտակչական գործունէութեան պարագային, Տեղ. Կօմիտէն իրաւունք ունի ի պահանջել հարկին զայն լուծել, վարիչի գիտութեամբ և նորը ընտրել, առաւուսին մինչև երկու շաբաթ :

Ծանօթ.— Կուտակից, ուէ մարմին չեղած վայրերու մէջ Ընդհ. Ժողովը կ'ընտրէ իր վարիչը :

Կ Ա Ր Գ Ս Պ Ա Հ Ո Ի Թ Ի Ի Ն

45.— Միութեանս հանդէպ յանցաւոր կը նկատուին այն անդամները, որոնք՝

ա.— Ծրագիր-Կանոնագրի տրամադրութիւններ

րուն հակառակ ընթացք դր բռնեն :

բ. — Չեն կատարեր Տեղ. և Կեդր. վարչութիւն-
ներու կողմէ դրուած պարտականութիւնները :

գ. — Կ'իւրացնեն միութեան դրամը :

դ. — Կը մերժեն ունէ ձեւի տակ հաշիւ տալ պատ-
կան մարմիններուն :

ՊԱՏԻՎՆԵՐ

46. — Տեղ. վարչութեան կողմէ յանցաւոր նկատ-
ուած տնդամենքը Լ'նդհ. ժողովի կողմէ քննուելով,
կ'ենթարկուին առաջին անգամ յանդիմանութեան, և,
եթէ չարունակեն իրենց ընթացքը, Կեդր. վարչու-
թեան միջոցաւ կը կախակայուին. մինչև Պատգ. ժո-
ղովը. որը իրաւունք ունի արտաքսելու և կամ ներե-
լու յանցաւոր նկատուած անդամը :

ԾՐԱԳԻՐ-ԿԱՆՈՆԱԳՐԻ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ

47. — Ներկայ Ծրագիր-Կանոնագիրը Կ. Կ. ի
կողմէ վաւերացուելէ վերջ, կը դրուի գործադրու-
թեան :


48. — Պատգ. ժողովը միայն կարող է բարեփո-
խել սոյն կանոնագիրը և ներկայացնել Կ. Կ. ի վաւե-
րացման :

ՄԻՈՒԹԵԱՆ ԼՈՒԾՈՒՄԸ

49. — Միութիւնը լուծելու իրաւունքը վերապահ-
ուած է Կ. Կ. ին :

50. — Միութիւնը լուծուելու պարագային՝ իր
բոլոր գոյքերը և դրամը կը յանձնուին Տեղ. Կօմիտէին :

Սոյն ծրագիր-կանոնագիրը ընդունուած է 1925
Ա. պատգամաւորական ժողովին կողմէ և վաւերաց-
ուած է 1925 Մարտ 5 Լեռն. — ի Կ. Կ. ի կողմէ :



ԳԱՍ Զիմնարար Գիտ. Գրադ.



FL0321311

